ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20-21-19
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

04 Մարտի 2021թ. ք. Երևան

Նախագահությամբ՝ Կ.Հովհաննիսյանի
անդամներ՝ Ռ. Սինոյան
Հ. Ռշտունի
Ա. Ալաբերքյան
Վ. Բերակչյան
Բ. Ղալոյան

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 01/03/21թ. «Արարատ»-«Վան» (ԲԽ077) խաղին՝ «Վան» թիմի ֆուտբոլիստ Հենրի Ավագյանի (N 12354) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար).

2. 26/02/21թ. «Արարատ-2»-«Ֆյունիկ-2» (ԱԽ033) խաղի մասին. «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների մարզաշապիկների վրայից բացակայում էին ֆուտբոլիստների ազգանունները:

3. 01/03/21թ. «Ակադեմիա-2-05»-«Արտաշատ-04» (18Β001) խաղին՝ «Ակադեմիա-2-05» թիմի ֆուտբոլիստ Ռաֆիկ Այվազյանի (N 26522) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար).

4. 01/03/21թ. «Ակադեմիա-2-05»-«Արտաշատ-04» (18Β001) խաղին՝ «Արտաշատ-04» թիմի ֆուտբոլիստ Վախթանգ Սողոմոնյանի (N 37276) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար).

5. 01/03/21թ. «Ակադեմիա-2-05»-«Արտաշատ-04» (18Β001) խաղի մասին. Ոստիկանը չի ներկայացել նախախաղային խորհրդակցությանը և խաղադաշտ է ժամանել 14:55-ին: Խաղը սկսելիս բժիշկը եղել է խաղադաշտում, սակայն խաղի 6-րդ րոպեին բժիշկը լքել է խաղադաշտը: Խաղը դադարեցվել է 6 րոպե, մինչև բժշկի ներկայանալը խաղին:

**Հարց. 1**

**ՈՐՈՇՈՒՄ.**

1. 01/03/21թ. «Արարատ»-«Վան» (ԲԽ077) խաղին՝ «Վան» թիմի ֆուտբոլիստ Հենրի Ավագյանի (N 12354) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Հենրի Ավագյանի որակազրկել 1 խաղով, «ՖԱ Վան ՀԿ»-ին տուգանել 25000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 2

ՈՐՈՇՈՒՄ.

2. 26/02/21թ. «Արարատ-2»-«Փյունիկ-2» (ԱԽ033) խաղին՝ «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների մարզաշապիկների հետնամասում ազգանունները բացակայելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 59-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ՖԱ-ին տուգանել 60000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 3

ՈՐՈՇՈՒՄ.

3. 01/03/21թ. «Ակադեմիա-2-05»-«Արտաշատ-04» (18Բ001) խաղին՝ «Ակադեմիա-2-05» թիմի ֆուտբոլիստ Ռաֆիկ Այվազյանի (N 26522) հեռացման (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 37-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Ռաֆիկ Այվազյանին որակազրկել 1 խաղով, ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիա ակումբին տուգանել 2000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 4

ՈՐՈՇՈՒՄ.

4. 01/03/21թ. «Ակադեմիա-2-05»-«Արտաշատ-04» (18Բ001) խաղին՝ «Արտաշատ-04» թիմի ֆուտբոլիստ Վախթանգ Սողոմոնյանի (N 37276) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 37-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Վախթանգ Սողոմոնյանին որակազրկել 1 խաղով, Արտաշատի համալիր մարզադպրոց-ին տուգանել 3000 ՀՀ դրամի չափով։

Հարց. 5

ՈՐՈՇՈՒՄ.

5. 01/03/21թ. «Ակադեմիա-2-05»-«Արտաշատ-04» (18Բ001) խաղին՝ ոստիկանը նախախաղային խորհրդակցությանը չներկայանալու, և հանդիպումը 6 րոպե դադարեցվելու համար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 36-րդ հոդվածի 34-րդ և 35-րդ կետերի համաձայն՝ ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիա ակումբին տուգանել 7000 ՀՀ դրամի չափով։

ՆԱԽԱԳԱՀ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝

1. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի Հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.

   Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: